

դես էին եկել ռուս հին գրականության տարբեր հարցերին վերաբերող զեկուցումներով:

Լեինգրադյան երեք օրերի ընթացքում կարդացվեցին ինը զեկուցումներ: Ռուս գիտնականները լսեցին Ղ. Այվազյանի «Հին շրջանի հայ-ռուսական մշակութային և գրական կապեր», Քնարիկ Տեր-Ռավոյանի «Վահան Գողթնեցու վկայաբանությունը և նրա ժանրային առանձնահատկությունները», Հասմիկ Սիմոնյանի «Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը հայ գրականության մեջ», Իմանուել Պիվազյանի «Հայ միջնադարյան առակագրությունը», Մարգո Մելիքյան-Դարբինյանի «Հովհաննես Դրասխանակերտու պատմությունը որպես գրական հուշարձան», Արշալույս Ղազինյանի «Գրիգոր Նարեկացու «Մատյան Ողբերգության» ստեղծագործության բնարական հերոսը» և Լևոն Չուգասյանի «Հայ միջնադարյան մանրանկարչությունը» զեկուցումները: Երևանի համալսարանի, Մատենադարանի և գրականության ինստիտուտի վերահիշյալ աշխատակիցներից բացի հայկական պատվիրակության կազմում էին նաև ՀՍՄՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակից, բանասիրական գիտ. թեկնածու Պարույր Մուրադյանը և «Սովետական գրող» հրատարակչության բաժնի վարիչ Իրինա Կարոնյանը: Պ. Շուրադյանի զեկուցման թեման էր «Գրքի դասակարգման սկզբունքները միջնադարյան Հայաստանում», իսկ Ի. Կարոնյանը հանդես եկավ «Հայ հին գրականության հուշարձանները» մատենաշարի մասին հաղորդմամբ: Լեինգրադյան գիտաժողովը սկսվեց հայկական պատվիրակության ղեկավար, գրականության ինստիտուտի տնօրեն, ՀՍՄՀ ԳԱ քրդակից անդամ էդվարդ Ջրբաշյանի բացման խոսքով: Նա սեղմ ներկայացրեց հայ գրականության ժամանակագրական փուլերը, զարգացման հիմնական ուղղությունները և գիտական ուսում-

նասիրությունների գլխավոր արդյունքներն ու խնդիրները: Է. Ջրբաշյանը նշեց, որ ընթերցումների նպատակն է ներկայացնել ոչ թե հայ հին գրականության ընդհանուր պատկերը կամ նշանավոր հեղինակների դիմանկարները, այլ վերջին տարիներին կառարվող առանձին հետազոտությունների արդյունքները:

Կարգացված զեկուցումները առաջ բերեցին մեծ հետաքրքրություն լեինգրադյան գիտնականների շրջանակում և դրանց շուրջ ծավալվեց մտերի փոխանակություն: Գիտաժողովի վերջում արդյունքները ամփոփելիս Պուշկինյան տան հին ռուսական գրականության բաժնի վարիչ, ակադ. Դմիտրի Լիխաչովը բարձր գնահատեց հայկական ընթերցումները և նշեց զեկուցումների կարևորությունը հին գրականության զարգացման ընդհանուր օրինակաբանությունների բացահայտման տեսակետից: Դ. Ս. Լիխաչովը և մյուս ելույթ օժեցողները ընդգծեցին նմանօրինակ գիտաժողովների նշանակությունը ազգային գրականությունների ընդհանրությունների և յուրահատկությունների ուսումնասիրման գործում:

Գիտաժողովի օրերին հայ պատվիրակության անդամները այցելեցին Պուշկինյան տուն, դիտեցին գրադարանն ու ձեռագրապահոցը:

Բոլոր շրջագայությունների և այցելությունների ժամանակ հայ գիտնականները վայելում էին ռուս գործընկերների բացառիկ հագաստարությունն ու ուշադրությունը: Գիտաժողովը ոչ միայն գիտական շփում էր, այլև հոգեկան մերձեցում ու փոխհարստացում:

Անշափ ուրախալի է, որ առաջիկայում Պուշկինյան տունը պիտի հրատարակի երևանյան և լեինգրադյան ընթերցումների նյութերն ընդգրկող ժողովածուն:

Ս. ԶՈՒՅԱՆ
Լ. ԶՈՒԳԱՍՉԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Շուրջ մեկուկես տասնամյակ է, ինչ Երևանի պետական համալսարանի և Լյուբլինի (Լժ) Մարիա Կյուրի-Սկլոդսկայայի անվան համալսարանի միջև ստեղծված են գիտական համագործակցության ու բարեկամական սերտ կապեր: Այդ կապերը ավելի ամրապնդելու նպատակով երկու համալսարանների միջև 1971 թ. մայիսին կնքվել է պայմանագիր: Անցած ժամանակաընթացքում, ըստ այդ պայմանագրի, Երևանի և Լյուբլինի համալսարաններում կազմակերպվել են գիտական նստաշրջաններ, փոխայցելություններ, հանդիպումներ ու այլ միջոցառումներ:

Երևանի համալսարանը 1975 թ. «Նղբայրա-

կան համագործակցություն» վերնագրով առանձին գրով ուսերեն հրատարակել է այդ կոնֆերանսների նյութերը: Իսկ Լյուբլինի համալսարանը լեհերեն տպագրել է պրոֆ. Մ. Զակչևսկա-Նյուրասովայի «Հայաստանի պատմություն» գիրքը, որն այժմ թարգմանվում է հայերեն և առաջիկայում լույս կրնձայի Երևանի համալսարանի հրատարակչությունը: Հայ-լեհական պատմական կապերի ու հարաբերությունների մասին 1977 թ. մենագրություն է տպագրել նաև Երևանի համալսարանի ընդհանուր պատմության ամբիոնի դոցենտ Մ. Հովհաննիսյանը: Շուտով Լյուբլինի համալսարանը լեհերեն լույս կընձայի հայ-լե-

հական պատմական կապերին նվիրված մի այլ ժողովածու ևս, որի մեջ գետեղվելու են երկու բարեկամ համալսարանների գիտնականների ուսումնասիրությունները:

Լյուբլինի և Երևանի համալսարանների գիտական ու բարեկամական համագործակցության մի վառ դրսևորում էր նաև ս. ք. հոկտեմբերի 17—22-ը Երևանի համալսարանում անցկացված համատեղ գիտական նստաշրջանը՝ նվիրված պատմության, փիլիսոփայության և ֆիմիայի ժամանակակից պրոբլեմներին:

Քացելով կոնֆերանսը՝ Երևանի համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր պրոֆ. Լ. Կարապետյանը խոսեց երկու համալսարանների միջև հաստատված գիտական ու բարեկամական կապերի, հայ ու լեհ գիտնականների համատեղ բեղմնավոր գործունեության մասին: Նա անդրադարձավ նաև հայ և լեհ ժողովուրդների միջև եղած բարեկամական հեռավոր կապերին, որոնք դարերի ընթացքում ամրապնդվել ու դարձել են մի կուռ միասնություն և այսօր դրսևորվում են տեսնության, գիտության ու արվեստի տարբեր բնագավառներում: Այդ հիմնվուրց կապերի այսօր շարունակվող մի օղակն է Երևանի և Լյուբլինի համալսարանների միջև բարեկամական ու գիտական համագործակցությունը:

— Չնայած Երևանի համալսարանը նոր է բոլորում իր 60-ամյակը, — իր ողջունյի խոսքում ասաց Լյուբլինի համալսարանի պատվիրակության ղեկավար, պրոֆ. Չ. Ցացկովսկին, բայց կարելի է ասել, որ այն ունի հիմնվուրց ավանդույթներ: Ձեր համալսարանում լուծվում են գիտական բազմաթիվ պրոբլեմներ, որոնք վերաբերում են ինչպես հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, այնպես էլ բնական ու հասարակական գիտություններին, ժողովուրդների ինտերկուլտուրալ բարեկամությանն ու համագործակցությանը: Հայ և լեհ ժողովուրդների միջև եղած բարեկամական կապերը գալիս են դարերից: Առանձնապես հարուստ պատմությանն են ունեցել լեհահայ գաղթաբանները, որոնք իրենց ազդեցությունն են բողել մեր մշակույթի վրա: Այսօր քառամսեկուրվ այդ ավանդական կապերը, երկու համալսարանների գիտնականներս նպատակ ունենք համատեղ լուծելու գիտական մի շարք խնդիրներ: Մենք հույս ունենք, որ առաջիկայում մեր համալսարանները կփոխանակեն նաև ռուսախոսներ ու ասպիրանտներ, որոնք հետագայում կարող են էլ ավելի հարստացնել ու ընդլայնել մեր այսօրվա գործը:

Այնուհետև պլենար նիստում զեկուցումներով հանդես եկան Լյուբլինի համալսարանի պրոֆեսոր Ա. Կոպրուկովնյակը և Երևանի համալսարանի դիպլոմատիկական մատերիալովմի ու տրամաբանության ամբիոնի ղոցեկու է. Մարգարյան:

Նր: Պրոֆ. Ա. Կոպրուկովնյակը իր զեկուցման մեջ անդրադարձավ լեհ-հայկական տեսնական, մշակութային ու գիտական ներկա կապերին: Նա ընդգծեց, որ Սովետական Հայաստանի և Լեհական ժողովրդական Հանրապետության միջև գոյություն ունեցող այս կապերը նպատում են մեր երկու ժողովուրդների հոգևոր հարստացմանն ու տեսնության զարգացմանը: Իոց. է. Մարգարյանը զեկուցեց գիտության լեզվի փիլիսոփայական ըմբռնման խնդիրների մասին:

Պատմության և փիլիսոփայության բաժանմուններում կարդացվեցին 26 զեկուցումներ: Փիլիսոփայության բաժանմունքում, որի նիստերը անցկացվեցին ՍՍՀՄ փիլիսոփայության ընկերության հայկական բաժանմունքի հետ համատեղ, կարդացվեցին 14 զեկուցումներ, որոնք նվիրված էին մարքս-լենինյան փիլիսոփայության արդի պրոբլեմներին: Հետաքրքիր զեկուցումներ կարդացին Լյուբլինի համալսարանի դասախոսներ, դոկտորներ Ս. Մագբերկյան («Մարքսիզմի սուբյեկտի հասարակական նախադրյալները ըստ Գ. Մ. Մեադայի»), Յա. Միզինյան («Իմացության սուբյեկտի տեսությունը ըստ Կ. Լորենցի»), Խ. Ռայսը («Իմացության սուբյեկտի տեսությունը XVIII դարի ֆրանսիական փիլիսոփայության մեջ»), Վ. Մարտինը («Հոգեկանի կառուցվածքի տեսությունները և դրանց փիլիսոփայական ասպեկտները»):

Երևանի համալսարանի դասախոսներից բաժանմունքի նիստում հանդես եկան պրոֆ. Հր. Շաբարյանը («Կառուցվածքային փոփոխությունները փիլիսոփայության գործողության մեջ և նրա կոնցեպտուալ ապարատի սեմանտիկական միասնության պրոբլեմ»), դոց. Ս. Հովհաննիսյանը («Փիլիսոփայական գիտելիքի առանձնատեսությունը և փիլիսոփայական փաստարկումը»), դոց. Մ. Դանիելյանը («Գիտելիքի կառուցվածքը և դրանի վերաբերյալ արդի տեսությունները»), դոց. է. Հարությունյանը («Սկեպտիկի փաստարկումները ուղղված տրամաբանի դեմ») և ռաիչներ:

Պատմության բաժանմունքում ՀՍՍՀ ԳԱ ակադ. Գ. Ղարիբջանյանի զեկուցումը նվիրված էր XX դարի սկզբի ցարական ինքնակալության դեմ մղված պայքարում կովկասյան և լեհական մարքսիստների հեղափոխական համագործակցությանը, իսկ պրոֆ. Ա. Մեացակայանը իր զեկուցման մեջ կանգ առավ մեծ Նոկտեմբերի բարիկադներում Հայաստանի և Լեհաստանի զավակների հեղափոխական համագործակցության վրա:

Հայերը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ակտիվ մասնակցություն են ունեցել Լեհաստանում մղված պարտիզանական պայքարին: Նրանք լեհ պարտիզանների հետ ուսուսի կովել են ֆաշիստական զավթիչների

ղեմ հանուն Լեհաստանի ազատագրության ու անկախության: Այս հարցերին էր նվիրված Լյուբլինի համալսարանի դոցենտ Ջ. Մանկովսկու զեկուցումը:

Պրոֆ. Մ. Զակչևսկա-Դուբասովան հանդես եկավ «Հայկական արհեստագործությունը հին Ինչ Պոսպոլիտայում» զեկուցումով: Նա նշեց, որ միջնադարյան Լեհաստանում հայ արհեստավորները ծավալել են լայն գործունեություն, քվեց արհեստների այն նյութերը, որոնցով զբաղվել են հայերը, միաժամանակ ընդգծելով, որ հայ արհեստավորների նաշակով արտադրանքը (գորգեր, կոշիկներ, գոտիներ և այլն) մեծ համբավ էր վայելում և բարձր գնահատվում Լեհաստանում:

Չ. Կայստայանի զեկուցումը նվիրված էր միջնադարյան Լեհաստանի հայկական գաղթավայրերին, իսկ Բ. Բարսեղյանը իր զեկուցման մեջ անդրադարձավ XIX դ. հայ-լեհական գրական կապերին:

Դոկտոր Մ. Մունձիկը կոնֆերանսում կարգա «Լեհերը Հայաստանում XIX—XX դարերի սահմանագլխին» զեկուցումը: Նա անդրադարձավ լեհ և հայ մտավորականության համատեղ գործունեության բազմապիսի խնդիրներին: Դոկտոր Ք. Վրոբել-Լիպովան վերլուծեց լեհահայերի դիվանագիտական գործունեությունը XVI—XVIII դարերում:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը «Խոտիների պատերազմը ըստ հայկական սկզբնաղբյուրների» զեկուցման մեջ բերեց բազմաթիվ փաստեր ու վկայակոչումներ, որոնք պահպանվում են հայ հեղինակների ստեղծագործություններում և վերականգնում են Խոտիների պատերազմի ընդհանուր պատկերը:

Իոց. Մ. Հովհաննիսյանը կանգ առավ Հայաստանի անկախության վերականգնման Յան Սոբեսկու պլաններին: Լեհաստանի թագավոր Յան III Սոբեսկին, պատասխանելով հայերից ստացած բազմաթիվ խնդրանքներին, մի նամակ է

գրում հայոց կաթողիկոսին՝ հայտնելով իր պատրաստակամությունը զինված ուժեր ուղարկելու Հայաստանը թուրքական ու պարսկական լծից ազատագրելու և հայկական քաղաքները վերականգնելու նպատակով: Միաժամանակ Սոբեսկին առաջարկում է հայոց կաթողիկոսին իր ժողովրդի հետ միասին ընդունել կաթոլիկական դավանանք: Չեկուցողը գտավ, որ Սոբեսկու այդ պլանները անիրագործելի էին, որովհետև Լեհաստանը երկարամյա պատերազմներից հետո ծանր վիճակում էր գտնվում:

«Հայ գրչության արվեստը Պոդոլիեի գաղթավայրերում» զեկուցումը հանդես եկավ դոկտոր Վ. Գրիգորյանը: Նա ընդգծեց, այն միտքը, որ հայ զեղանկարչությունը լայն զարգացում է ունեցել Պոդոլիեում, և հայ վարպետների կտավները իրենց ազդեցությունն են թողել լեհական միջնադարյան զեղանկարչության վրա: Լ. Չուգասոյանը իր զեկուցման մեջ անդրադարձավ Լեհաստանում ապրած Բագուշների՝ հայ նկարիչների գերդաստանի գործունեությանը, լեհահայ ոսկեիչների ժառանգության հետ առնչվող որոշ հարցերի: Նա նշեց նաև XVIII դարի ըսկրզբին Մոսկվայի Կրեմլում աշխատած հայ սգգի նշանավոր նկարիչ Բոգդան Սալթանովի և լեհ վարպետ Քիչտոֆ Կոնրատովիչի համատեղ գործունեությունը:

Նստաշրջանի աշխատանքների արդյունքների ամփոփման և մտքերի փոխանակության ժամանակ ելույթ ունեցող գիտնականները բարձր գնահատեցին զեկուցումները և նշեցին դրանք առանձին ժողովածուով հրատարակելու անհրաժեշտությունը:

Հյուրերը ծանոթացան Երևանի համալսարանի սուռյային և մեր հանրապետության պատմական մի շարք հուշարձանների:

Վ. Մ. Ա. Ա. Ա. Ա.